ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«19» հուլիսի 2024թ. N ՄՈ/353-Ա

ք. Արմավիր

«ԼՈՒԿԱՇԻՆԻ ՀՈՒՆԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆԱՐԻՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ, 163-րդ և 164-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը, և Նարինե Խաչատրյանի 2024 թվականի հուլիսի 19-ի դիմումը.

որոշում եմ՝

1. «Լուկաշինի Հունան Ավետիսյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Նարինե Խաչատրյանին տրամադրել ամենամյա երկարացված արձակուրդի մասը՝ 2024 թվականի հուլիսի 22-ից օգոստոսի 16-ը ներառյալ՝ 20 աշխատանքային օր տևողությամբ:
2. Նարինե Խաչատրյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Լուկաշինի Հունան Ավետիսյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Լուկաշինի Հունան Ավետիսյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ Գոհար Կոստանյանին:
3. 2024 թվականի հուլիսի 22-ից օգոստոսի 16-ը ներառյալ «Լուկաշինի Հունան Ավետիսյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ Գոհար Կոստանյանի աշխատավարձի վճարումն իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Նարինե Խաչատրյանին աշխատանքի մեջ համարել 2024 թվական օգոստոսի 19-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

2024-07-19 18:04:17 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից
eID

ՄԱՐԶՊԵՏ՝ **Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**